

ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՋԳԵՆԱ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ՈՒ ԱՌՍՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Նորին Ս. Օծություն
Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա-ԻՆ (Անթիլիաս),
Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ
Տ. ԵՂԻՇԵ արքեպիսկոպոսին (Երուսաղեմ),
Թուրքիայի Հայոց Պատրիարք Ամենապատիվ
Տ. ՇՆՈՐՀՔ արքեպիսկոպոսին (Ստամբուլ),
Բարեխնամ բոլոր թեմական առաջնորդներին և գերապատիվ եպիսկոպոսներին:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Այս տարի, մեծ եղեռնի հիշատակի տարի, սուգի և աղոթքի տարի:

Բայց այսօր նաև Ս. Զատիկ և մեծ ավետիս Փրկչի հարության:

Ինչքա՜ն մխիթարական է հայոց սրտերուն համար տոնել Զատիկը, տոնել հիշատակը Տիրոջ հարության և հաղթությունը ընդդեմ մահվան, ոգեկոչելով հիշատակը մեր նահատակաց, ողջունելով վերածնունդը մեր ժողովուրդին և մեր Մայր Երկրին:

Գուցե ավելի քան երբեք մեր հոգիները հավատքով և ցնծությամբ վեղուն, կօրհնեն ու կերգեն փառքը Քրիստոսի հարության, ու նաև փառքը նոր կյանքի կոչված հայ ողովուրդին:

Այս ավետիսներով, սիրելի՜ Վեհափառ Եղբայր, կշնորհավորենք Ձեզ և Ս. Էջմիածնեն կհղենք աստվածային օրհնություն Ձեզի և բարեջան միաբանությանդ, եկեղեցական-ազգային կազմակերպությանց և համայն Մեր հավատցյալ զավակներուն, մաղթելով բոլորիդ անսպառ եռանդ, շինարար ոգի, սիրով միություն, աշխատանքի երկար տարիներ խաղաղ, պտղառատ, ի փառս մեր ազգի և Եկեղեցիին:

«Շնորհք և սէր յարուցեալ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, եղիցին ընդ ձեզ այժմ և յաւիտեան»:

Ամեն:

ՎԱՋԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Զատկի առթիվ կներկայացնենք Մեր եղբայրական մաղթանքները Ձերդ Սրբության արևշատության և մեր Ս. Եկեղեցվո պայծառության համար:

ԽՈՐԵՆ Ա
ԱՆԹԻԼԻԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԻԼԻԿԻՈ

Մեր Տիրոջ հարության երջանիկ առթիվ Ձերդ Սրբության կներկայացնենք մեր, միաբանության և համայն ժողովուրդի ամենասանկեղծ շնորհավորությունները, մաղթելով Ձերդ Սրբության միշտ առողջություն և Մայր Աթոռին՝ բարգավաճում:

ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԵՐՈՒՍԱՂԵՄ Պատրիարք հայոց Երուսաղեմի

Տյառն մերո և Փրկչին Հիսուսի Քրիստոսի լուսապայծառ Հարության տոնին առիթով, կուգանք Ս. Օծությունդ շնորհավորել մեր կողմե և անունով մեր հոգևորական դասուն, պաշտոնական մարմիններուն և համայն հավատացյալ հոտին, մաղթելով Վեհիդ և Իր միաբանության երջանիկ և ուրախ տոնակատարություն: Կաղոթենք միշտ Ձեր թանկագին կենաց առողջության և երկարության համար, կմաղթենք Մայր Աթոռ անսասանություն և Հովվապետիդ հոգևոր շուքին և շնորհին մշտական տարածումը հանուր Հայաստանյայց Եկեղեցվո հավատացյալ հոտին վրա:

Մատչելով Օծելույդ Ս. Աջին, խոնարհ աղոթակից՝

ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՍՅԱՄԲՈՒԼ Պատրիարք հայոց Թուրքիո



ԹԵՄԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻՆ,
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ (Նյու-Յորք),
ԳԱԼՈՒՍՏ ԿԶՈՒԼՊԵՆԿՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ (Լիսաբոն),
ԱԲԳԱՐՅԱՆ ԱՎԱՆԴԻ ԵՎ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ (Լոնդոն),
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՆՁՆԱԽՄԲԻՆ (Բեյրութ),
ՎԱՐԴԱՆԱՆՑ ԱՍՊԵՏՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (Ուոտերտաուն),
ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ (Կալկաթա):

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Այս տարի, մեծ եղեռնի տարի, սուգի և աղոթքի տարի:

Բայց այսօր նաև Զատիկ և մեծ ավետիս Փրկչի հարության:

Ինչքա՜ն մխիթարական է հայոց սրտերուն համար տոնել Զատիկը, տոնել հիշատակը Տիրոջ հարության և հաղթությունը ընդդեմ մահվան, ոգեկոչելով հիշատակը մեր նահատակաց, ողջունելով վերածնունդը ժողովուրդին և մեր Մայր Երկրին:

Գուցե ավելի քան երբեք մեր հոգիները հավատքով և ցնծությամբ վեղուն, յօրհնեն ու կերգեն փառքը Քրիստոսի հրաշափառ հարության, ու նաև փառքը նոր կյանքի կոչված հայ ժողովուրդին:

Այս ավետիսներով կշնորհավորենք կՁեզ և Ս. Էջմիածնեն կհղենք Ձեզի աստվածային օրհնություն, մաղթելով Ձեզի և Ձեր կազմակերպության բոլոր ղեկավարներուն և անդամներուն շինարար աշխատանքի անսպառ եռանդ և միշտ հաջողություններ հայ ժողովուրդին ծառայելու Ձեր ակնիվ ու լուսավոր ճանապարհին վրա:

«Շնորհք և սէր հարուցյալ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, եղիցին ընդ ձեզ այժմ և յաւիտեան»:

Ամեն:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԾԱՆՈԹ ԴԵՄՔԵՐԻՆ

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Այս տարի Ս. Հարության ավետիսը կբերենք ձեզի, հայ ժողովուրդի մեծ եղեռնի հիշատակով ոգեշնչված:

Գուցե ավելի քան երբեք, մեր հոգիները ցնծությամբ կօրհնեն փառքը Քրիստոսի հրաշափառ հարության, որովհետև այսօր, հիսուն տարիներ հետո, մենք վկա-

ներն ենք մեր նահատակված ժողովուրդի և մեր Մայր Հայրենիքի վերածնունդին:

Այս ուրախությամբ կշնորհավորենք Ձեր Զատիկը և Ս. Էջմիածնեն կհղենք Ձեզի և Ձեր հարազատներուն ջերմագին բարեմաղթություններ արևշատության ու երջանկության:

Աստվածային օրհնություն Ձեզի, այժմ և հավիտյան:

Ամեն:

ՎԱՋԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Փրկչի հրաշափառ և Ս. Հարության տոնի առթիվ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով, ստացվեցին նաև ամենաջերմ և հարգալից զգացմունքներով գրված շնորհավորական բազմաթիվ այլ հեռագրեր և նամակներ արտասահմանի և ներքին մեր բոլոր թեմերի թեմական առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց վանական կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից: